ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԹԱԳ-ԽՈՒՅՐԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԽԱՉՄԱՆՅԱՆ Ս.Հ. (ԱՄՆ, Լոս Անջելես)*

Աշխարհի հին և նոր կրոնական համակարգերում, հոգևոր առաջնորդները կամ գլխավոր անձինք, որպես կարևոր խորհրդաբանական տարբերակիչ տարր, կրել և կրում են ծիսական թագ-գլխանոցներ: Հայ առաքելական եկեղեցու ավանդակարգում կաթողիկոսի այդ կարևոր գլխանոցը խույրն է: Խույրը բարձրադիր, շքեղ, ոսկեպաճույճ, կես մետր երկարությամբ թագ-գլխանոց է, որ Հայ առաքելական եկեղեցում կրում են միայն բարձրաստիճան հոգևորականները՝ եպիսկոպոսները և կաթողիկոսները՝ որպես հոգևոր արքաներ: Այն գործածվում է միայն եկեղեցական հանդիսավոր արարողությունների ժամանակ: Հատուկ թույլտվությամբ՝ խույր կարող են կրել նաև թեմական առաջնորդ ծայրագույն վարդապետները:

Այս կարևորագույն գլխանոցը կազմված է երկու հարթ մասերից, որոնք վերևում, դրսի կողմից անջատվում են իրարից: Այդ հարթ մասերի միջև դրված է իրար միացնող, բայց արտաքինից չերևացող կտոր, որը նպաստում է կրողի հարմարավետությանը: Երկու մասերն էլ կոնաձև են վերևում և սրածայր գագաթներին կրում են փոքրիկ խաչեր[1] (տե՛ս նկ. 8): **Խույր**-ը հայոց լեզվում նշանակում է **թագ, միթր[2], վարսակալ, արտա-**

---

* Սանտա Մոնիկա քաղաքային քոլեջ, Կալիֆոռնիա-Հոլիվուդի արվեստի ինստիտուտ, sofiakhachmanyan@aol.com, հոդվածի ընդունման օրը՝ 04.04.2018, տպագրության է երաշխավորել պատմ. գիտ. թեկնածու Ս. Պողոսյանը: Գիտական ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր Հ. Հակոբյան:

[1] **Ղազարյան Մ.**, Սուրբ Էջմիածին,Գանձատուն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1984, Խույր, XVIII դար:

[2] Mitra-հունարեն բառ է, նշանակում է՝ կոնաձև գլխարկ կամ կլոր գդակ, որ կոչվել են pilos և petasos: Այս գլխանոցները հույների կողմից օգտագործվել են քրիստոնեության ընդունումից առաջ և ծագումով փոյուգիական են: Հետագայում դրանք անցել են հռոմեացիներին՝ phrygium կամ frigium, երբեմն էլ՝ tiara անվանմամբ: Այս կոնաձև գլխարկը խորհրդանշել է ազատություն՝ “cap of liberty”: Հռոմում՝ I-II դդ., բարձր պաշտոն ունեցող քրմերը, հատուկ արարողությունների ժամանակ, կրում էին այս գլխանոցները, որ պատրաստվում էին ոսկեհյուս կտորից: Քրիստոնեության ընդունումից հետո

խուրակ, շարփուշ[3]: Առաջին երկու նշանակությունները հատկապես վերաբերում են եկեղեցական խույրին: Սակայն «խույրը» եպիսկոպոսական-կաթողիկոսական թագի ճիշտ անվանումն է[4]: Այն, ընդհանուր առմամբ, ոսկեգույն արևապատկեր լուսապսակն է կամ՝ արքայական թագը, որն իր պայծառությամբ շրջափակում է արժանավոր կրողի դեմքը: Այն տվյալ անձի սրբության և աստվածային նվիրաբերության վկայությունն է: Խույրը նաև խորհրդանիշն է հոգևոր գերբնական լուսավորության և ուժի, որ ճառագում են կրողի հոգուց և դուրս են նրա ֆիզիկական մարմնի սահմաններից[5]:

Անտիկ աշխարհում լուսապսակներով զարդարվել են հեթանոս աստվածները, թագավորները և կայսրերը: Լուսապսակների կիրառությունը որդեգրվեց քրիստոնեական ավանդույթի մեջ՝ զարդարելով Հիսուսի՝ «գառան», սրբերի գլուխը[6]: Հարկ է նշել նաև, որ քրիստոնեական ավանդության մեջ, խաչի վերին թևը խորհրդանշում է Քրիստոսի փրկագործության հաղթանակը և կոչվում է «թագ»[7]: Արքայական-քրմապետական իշխանությունը խորհրդանշող կարևոր գլխանոցը հեթանոսական հոգևոր հանդերձանքի համակարգում նույնպես թագն էր: Միհր-Արեգակին հին կրակապաշտ հայերը, Ղ. Ալիշանի կարծիքով, պատկերում էին «գլխի

առաջին անգամ վուշից պատրաստված միթրան օգտագործվել է VIII դ.,Կոնստանտին պապի կողմից: Գլխանոցի այս տարատեսակը փոյուգիական գլխարկ էր, որը փափուկ էր և կոնաձև կառուցվածք ուներ: Ծայրը, որ լցոնած էր զանազան մանրաթելերով, թեքվում և կախվում էր դեպի առաջ: Հռոմի պապերը, լինելով մեծ մասամբ տարեց մարդիկ, գլուխը տաք պահելու նպատակով, որդեգրեցին նաև այս գլխանոցը: Հետագայում, բազմաթիվ ձևերի փոխակերպվելով՝ այն ստացավ ներկայիս տեսքը (**Norris H.** Church Vestments, their origins & development, New York, LSC communications, 2002, p. 95-97):

[3] Շարփուշ բառի հիմքը շարն է, որ նշանակում է շղարշ, քող, վարշամակ (**Սուքիասյան Ա.**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե., 1967, էջ 500 և 504):

[4] **Օրմանյան Մ.**, Ծիսական բառարան, Ե., 1991, էջ 87:

[5] Քրիստոնեական ավանդության մեջ դրախտի Կենաց ծառը համարվում է «ողջ տիեզերքը կազմակերպող» խաչը և նրա վերին թևը, «որպես կանոն, կոչվում է «թագ» (**Պետրոսյան Հ.**, Խաչքար, ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Ե., 2008, էջ 42, 44, 60): Խորհրդաբանական համեմատությունը մարդու խաչաձև «կենաց ծառ» մարմնի և խաչի միջև ակնհայտ է, և երկու դեպքում էլ թագը «դրվում է» խաչի վերին թևի կամ գլխի վրա:

[6] **Chevalier J., Gheerbrant A.** The Penguin Dictionary of Symbols, London and New York, Penguin Books, 1996, p. 464-465.

[7] **Պետրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 44:

շուրջբոլորը տարածվող գուցե ճառագայթավոր պսակով»[8] (հուր-բակ կամ արեգակի բակ), որը, հավանաբար, հիմնական պատճառ-ազդեցությունն էր հայոց թագավորների ճառագայթավոր թագերի[9]: Միհր աստծու՝ Նեմրութ լեռան սրբավայրում գտնված քանդակի վրա պատկերված թագը, ձևով և կառուցվածքով, դրա վառ ապացույցն է[10]:

Վ. Հացունին նշում է, որ սկզբնական շրջանում, ինչպես քահանաները, այնպես էլ եպիսկոպոսները պատարագում էին գլխաբաց[11]: Հետագայում՝ IX դարում, հայ եպիսկոպոսները իրենց գլուխները ծածկում էին սպիտակ՝ «գլխոյ վարշամակով» կամ «ահարոնեան վարշամակով»[12], որը գլխին ամրացվում էր ամրակ-երիզով[13]: Նման վարշամակներ, միևնույն ժամանակ, կրում էին նաև արևմուտքի և Ալեքսանդրիայի հայրապետները[14]: Խույրը, ըստ Հացունու, առաջին անգամ կիրառվել է X դ., Հռոմում: Մինչև XII դ. այն դառնում է ընդհանուր եվրոպական եկեղեցիներում, որովհետև

---

[8] **Ղ. Ալիշան,** Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Ե., 2002, էջ 32:

[9] Հետագայում էլ՝ քրիստոնեության շրջանում, Արեգակը նվիրաբերվեց Քրիստոսին (նույն տեղում, էջ 59): Հետևաբար, պատշաճ էր միայն կաթողիկոս-եպիսկոպոսի գլուխը արեգակ-ոսկով զարդարելը:

[10] Այն բարձրադիր, ճառագայթավոր թագ է՝ կողքերից դեպի ներս սեղմված հարթ մակերեսներով, իսկ առջևից և հետևից կոնաձև է: Մինչդեռ կաթողիկոսական խույրի հարթ մակերեսները տեղադրված են առջևում և հետևում: Նմանատիպ թագ է կրում նաև Կոմագենեի արքա Անտիոքոս Երվանդունին: Երկու օրինակներն էլ պատկանում են մ.թ.ա. I դարին (**Դեմոյան Հ.**, Հայկական ազգային խորհրդանշաններ, զինանշաններ. դրոշներ. պարգևներ, Ե., 2012, էջ 41-42):

[11] Այս ավանդությունը նույնն էր նաև լատին եպիսկոպոսների համար (**Norris H.,** նշվ. աշխ., plate IV):

[12]«Եւ ապա արկանեն զսպիտակ Հայրապետական Քօղն ոսկեթել ի գլուխ Նորա» (**Արք. Բերբերյան Ա.**, Ինչպես են Հայ առաքելական եկեղեցում ընտրում և օծում եպիսկոպոս և Ամենայն Հայոց Կաթողիկոս, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1995, էջ 94): Հայրապետական այս սպիտակ քողը, որով ծածկվում է նորաօծ կաթողիկոսի գլուխը, իր անմիջական խորհրդաբանական աղերսներով կապված է Ահարոնի վարշամակի հետ և հոգևոր արքայության խորհրդանիշն է:

[13] Վարշամակը կամ քողը համարժեք էր թագին: Օրինակ՝ միջին դարերում նորընտիր կաթողիկոսը, որպես իր իրավունքի խորհրդանիշ, իր աթոռը ընդունում էր քողի հետ մեկտեղ (**Վարդապետ Մագուտյան Գ.**, Ընտրյալդ յԱստծոյ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունը, Էջմիածին, 1995, էջ 77):

[14] **Հացունի Վ.**, Պատմութիւն հին հայ տարազին, Վենետիկ – Ս. Ղազար, 1924, էջ 378-379: Նույն ժամանակաշրջանում լատին եկեղեցականները որդեգրել էին սպիտակ, կլորավուն կառուցվածքով վերոհիշյալ գլխանոցը, որի ճակատամասն ամրացվում էր թանկարժեք քարերով զարդարուն ժապավենով կամ ոսկե օղակով (**Norris H.**, նշվ. աշխ., էջ 97-98):

հռոմեական քահանայապետները այն նվիրում էին տարբեր երկրներում ծառայող եպիսկոպոսների[15]: Մ. Օրմանյանի կարծիքով, XII դ. առաջ եպիսկոպոսները «հունականին նման բոլորշի խոյր ունեին, որը մեր քահանաների այժմյան գործածած սաղավարտն է, և որ 1184-ին Հռոմի պապերի նվիրած հայրապետական զգեստի կիրառությամբ լատին եպիսկոպոսական խույրը մեզ մոտ էլ ընդունվեց»[16]:

Խույրից զատ՝ եպիսկոպոսները XIII դարում, իրենց ձեռնադրության ժամանակ, ընդունում էին նաև ճերմակ կնգուղ՝ ճակատին ոսկե խաչով[17]: Այս գլխանոցը գործածվում էր պաշտամունքի և ոչ թե պատարագի ժամանակ: Հացունին գտնում է, որ կնգուղը՝ Հայաստանում փոխարինեց «սպիտակազարդ սքողն»[18] և վկայում է, որ կնգուղն էլ իր հերթին XV դ. դուրս է մղվում Հայոց եկեղեցու եպիսկոպոսական հանդերձանքի համալիրից, որին վերջնականապես փոխարինելու է գալիս խույր-թագը[19]:

Խույրը, ինչպես նախապես նշվեց, համարվում է լատինական ծագում ունեցող թագ-գլխանոց՝ իր «mitra» անվանմամբ, որովհետև հայոց եկեղեցի մուտք է գործել XII դ., երբ Լուկիոս կամ Ղուկիոս III պապը եկեղեցական շքեղ հանդերձներ է ուղարկել հայոց կաթողիկոսին[20]: Նման նվիրատվություն է գրանցվել նաև 1234 թ. Գրիգոր Թ պապի կողմից: Եվս մեկ նվիրատվություն է կատարվել XIII դ. սկզբին, երբ Ինոկենտիոս III պապը տասնչորս խույր է նվիրել Կիլիկիայի եպիսկոպոսներին: Նման նպատակամիտված նվիրատվությունները հանգեցրել են այն բանին, որ խույրը «հաւանօրեն ԺԵ դարէն սկսեալ՝ կվտարէ կնգուղը սրբազան հանդերձից դասէն, թէ հայրապետին և թէ եպիսկոպոսաց վրայ, և ինք կը բռնէ անոր տեղը բոլոր պաշտամանց մէջ»[21]: Այս ընթացքում խույրի հետ, խույրին կից՝ հետևի կողմից ամրացվել է «վարշամակն նուրբ ի վայր խոնար-

---

[15] Նույն տեղում, էջ 378: Այս ժամանակ լատին եկեղեցում խույրը դեռ փոյուգիական գլխարկների տեսքով էր օգտագործվում և իր վերջնական տեսքը ստացավ միայն XIII դարում (**Norris H.**, ֆիգ. 132, նշվ. աշխ., էջ 103):

[16] **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., էջ 87:

[17] Հետագայում՝ XIX դ. նման, սակայն ոչ ոսկե, այլ՝ ադամանդազարդ խաչ է երևում հայոց կաթողիկոսի վեղարի ճակատամասում. այն նվիրում էր ռուսաց թագավորը (տե՛ս **Հացունի Վ.,** նշվ. աշխ., էջ 386-407):

[18] Նույն տեղում, նշվ. աշխ., էջ 386:

[19] Նույն տեղում, նշվ. աշխ., էջ 402:

[20] **Հացունի Վ.**, նշվ. աշխ., էջ 402:

[21] **Հացունի Վ.**, նշվ. աշխ., նույն տեղում:

հեալ»[22]: Այս պատճառով էլ՝ հետագայում ուսումնասիրողները հետևություն են արել, որ խույրը լատինական ծագում ունի:

Բացի խույրից, XV-XVIII դդ. հայտնի են եղել նաև արքայական պսակաձև թագին նմանվող թագեր, որոնք այս ժամանակաշրջանում մանրանկարիչները ներկայացրել են տարբեր ձևերով[23]: Վ. Հացունին, իր ուսումնասիրության մեջ քննում է մի խումբ նման թագեր և եզրակացնում, որ դրանք բոլորն էլ «գծագրողաց երևակայութիւնն են»: Քիչ հավանական է, որ երեք հարյուր տարի շարունակ, հանդերձի՝ գոյություն չունեցող ամենակարևոր տարրերից մեկը շարունակաբար նկարվեր բազմաթիվ նկարիչների կողմից և հանկարծ անհետանար, մանավանդ որ նման թագեր նախկինում կրում էին հայոց թագավորները, որոնք նաև քրմերի կոչում և աստիճան ունեին[24]:

Վ. Հացունին իր գրքում ներկայացրել է լատինաց կողմից օգտագործվող խույրի «աստիճանական զարգացման պատկերի» ընթացքը, որտեղ այս գլխանոցը բազմաթիվ տարբեր ձևեր՝ «կոնաձև սրածայր... գմբեթաձև[25]...կը փոսնայ գագաթին վրայ... ապա կը գոգանայ՝ ճակատին կողմն ուղղած աղեղնաձև փոսը[26]...», կրելուց հետո դառնում է մեզ հայտնի սրածայր խույր-թագը: Դա համոզիչ չէ, որովհետև ձևի և խորհրդաբանության շարունակականություն չի դիտվում, և նման կառուցվածքով գլխանոցներ հայտնի չեն «հռոմեացոց անցյալում»[27]: Մինչև III դ. Հռոմի Արևի

---

[22] Նույն տեղում, էջ 1407:

[23] **Բաղիշեցի Վ.**, Եկեղեցու հիմնարկեք, Ավետարան, 1577 [Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. N 961, 3 բ], **Հակոբյան Հ.**, Վասպուրական, Ե., 1978, նկ. 82:

[24] Օրինակ, ինչպես Տիգրան Մեծի կամ Արտավազդի թագերը, որ կոչվել են «Հայկական թագ», **Հացունի Վ.**, նշվ. աշխ, էջ 50-51:

[25] Ծոփքի հայ թագավորներից Զարեհը իր դրամի վրայի պատկերում կոնաձև թագ է կրում, իսկ գմբեթաձև թագը, որը ներկայացված է Զարեհի կողքին, կրում է Արշամ արքան (**Պատրիկ Ա.**, նշվ աշխ., տախտակ 6, նկ. 1, 2, էջ 29):

[26] 1700 թ. Կեսարիայում պատրաստված Ավետարանի արծաթե կազմի վրա, Տյառնընդառաջի տեսարանում նման գլխանոց է կրում Սիմոն Ծերունին (Treasures in Heaven, The Pierpont Morgan Library, 1994):

[27] Օտար աղբյուրներում mitra-ի կամ mitre-ի ստեղծման մասին տեղեկությունները բացակայում են: Ոմանք գտնում են, որ խույրի պատմությունն սկսվել է դեռ «առաքյալների ժամանակներից», ոմանք՝ VIII-IX դդ., իսկ ուրիշներն էլ այն վերագրում են X-XI դդ.: Խույրի որդեգրումից առաջ հռոմեական եպիսկոպոսները կրում էին պսակաձև կամ՝ tiara կոչվող պարզ թագերը: Խույրի զարգացման նկարագրությունը համընկնում է Հացունու նկարագրությանը: Այն սկզբում կոնաձև է, հետո դառնում է կլոր (սաղավար-

տաճարում ծառայող քուրմը կրում էր թանկարժեք քարերով զարդարված ոսկե, ճառագայթաձև թագ, իսկ Յուպիտերի տաճարի քուրմը՝ Յուպիտերի պատկերով զարդարված թագ: Մեկ հարյուրամյակ հետո էլ հռոմեական քրմերն ու քրմուհիները կրում էին թագեր, որոնք բոլորն էլ ցածրադիր էին՝ դափնեպսակի, պարզ օղակ-վարսակալի կամ թիարայի տեսքով[28]:

Քննենք նաև հռոմեական կայսրերի թագերից մեկը, որ կոչվում էր արքայական խույր (imperial diadem): Այս կարևոր գլխանոցը կայսերական միապետության խորհրդանշանն էր: Այն պարզ, ցածրադիր կիսաօղակ էր, որը կարճ թագակապերով կապվում էր հետևում, և ծայրերը կախվում էին թիկունքին: Հետագայում այս թագերը ճակատամասում զարդարվում էին թանկարժեք քարերով[29]: Նշանակում է՝ քրիստոնեության ընդունումից հետո, երբ կաթոլիկ եկեղեցին կազմակերպվեց և որդեգրեց ծիսական հագուստի վերաբերյալ կարգը, խույրին առնչվող ավանդույթ նախապես գոյություն չուներ: Կաթոլիկ եկեղեցու բարձրաստիճան սպասավորի բարձրադիր խույրը, հավանաբար, հետագայում արևելյան մշակույթներից ներմուծված ավանդույթ էր:

Հետաքրքիր է, որ հայոց ժամանակակից եկեղեցու կաթողիկոսը, որպես հոգևոր արքա, չի կրում ճառագայթավոր թագ, այլ գործածում է խույր[30]: Փորձենք պարզել, թե mitra-mitre-խույրը, որ հաստատապես մնացել է, և սիրով որդեգրել ու մինչ հիմա էլ հպարտությամբ կիրառում են հայոց եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները, որպես գլխի հարդա-

---

տաձև), մեջտեղում գագաթը իջնում, դառնում է փոսորակ, ապա՝ եղջյուրաձև և հետո միայն XII դ. սկզբում ընդունում է այժմյան, սակայն բավականին ցածր ձևը: Պետք է նշել, որ այս՝ իրարից բավական տարբերվող խույրերը կոչվել են նույն անունով՝ mitre (**New Advent, Catholic Encyclopedia**, Franciscan University Steubenville, online, http://www.newadvent.org/cathen/10404a.htm).

[28] VIII դարում, Tiara կոչվում էր փոյուգիական ծագում ունեցող, ուղտի մազի թաղիքից պատրաստված կոնաձև camelaucum կոչվող գլխանոցը, որի ճակատամասն ամրացվում էր ոսկե զարդարուն օղակով: Հետագայում այս գլխանոցի վրա ամրացվում էր երկրորդ, հետո նաև երրորդ շարք գլխանոցը, որը XIV-XV դդ. երբեմն չափից ավելի բարձրադիր տեսք ուներ (**Norris H.**, նշվ. աշխ., էջ 113-114):

[29] The World of Roman Costume, Edited by **Lynn Sebesta J.& Bonafante L.** The University of Wisconsin Press, USA, 2001, p. 82-90.

[30] Հայոց արքաների թագերը X դարում նույնպես կոչվում էին խույր, որոնք պատրաստվում էին ոսկուց և զարդարվում էին մարգարիտներով և այլ թանկարժեք քարերով (**Հովհաննես Դրասխանակերտցի**, Հայոց պատմություն, թարգմ. և ծանոթ.՝ Գ.Բ. Թոսունյանի, Ե., 1996, էջ 205:

րանքի կարևոր մաս, ի՞նչ ծագում ունի, ինչպե՞ս և որտեղից են այն որդեգրել հռոմեացիները:

Խույրի մասին առաջին պատմական տեղեկություններից մեկը մեզ է հասել Սարգոնի նամակից, որում ասորական արքան նկարագրում է ուրարտական մեհյաններից մեկում գտած «արձան մ' Արգիշտա՝ արքային Ուրարտուի, որ գլխին դրած էր աստուածոց խույրը, (նկ. 2, նկ. 3) և աջ ձեռքով կ'օրհներ»[31]: Սարգոնը նաև նշում է, որ խույրը զարդարված էր աստղերով: Վ. Հացունին, պատմական այլ փաստ-ապացույցներ չունենալու պատճառով ենթադրել է, որ ուրարտական խույրը պետք է, որ տարբերվեր ասորականից՝ չնայած վերջինի զգալի ազդեցություններին: Ուրարտական որմնանկարներում և բարձրաքանդակներում պատկերված քրմերի գլխանոցները համանման են Տիգրան Մեծի և Արտավազդ Երկրորդի թագերին» (նկ. 4): Վանի թագավորության և Արտաշեսյան հարստության արքաների թագ-խույրերի միջև ընդհանրություններն առկա են. դրանք բոլորն էլ բարձրադիր կառուցվածք ունեն և աստղազարդ են: Տարբերությունն այն է, որ Արտաշեսյան արքաների թագերը ճառագայթաձև են, իսկ Վանի թագավորության թագերը զարդարված են վարդյակ-ցցունքով:

Մ. Բութիը վկայում է, որ Ալեքսանդր Մեծի՝ Միջագետք կատարած արշավանքների ժամանակ Բաբելոնում Բերոսուս անունով պատմաբանը, ինչպես Հերոդոտոսը նրանից առաջ, ուսումնասիրել էր մեհյանների պատերին արձանագրված թագավորական ցուցակները, որոնք այնուհետև պահվել են քրմական արխիվներում: Այդ արխիվներում պահպանվել էին նաև պատառիկներ, որոնք վկայում էին երկրի և երկնքի արարման ընդհանուր եղելությունների մասին: Բերոսուսը նկարագրում է, որ սկզբնական ժամանակներում, երբ երկիրը բնակեցված էր պարզունակ մարդկանցով, ծովից դուրս եկավ մի ձկնակերպ հրեշ՝ Օաննես անունով: Ձկան գլխի և մարմնի ծածկույթի տակ նա ուներ մարդկային գլուխ և մարմին՝ նա երկկենցաղ էր (նկ. 1): Օաննեսը նաև խոսում էր մարդկային ձայնով և լեզվով: Զ. Սիտչինը ձկնատիպ աստծուն անվանում է Էնկի[32], իսկ որոշ հայ ուսում-

[31] **Հացունի Վ.**, նշվ. աշխ., էջ 20:
[32] **Sitchin Z.** The 12th Planet, Book 1 of the Earth Chronicles, New York, 2007, p. 293-294.

նասիրողներ նրան անվանում են Հայա-Էնկի[33]: Բերոսուսը վկայում է, որ Օաննեսը մարդկանց ծանոթացրել է սերմերին և պտուղներին, ինչպես նաև գրերին, սովորեցրել է գիտություն և տարբեր արվեստներ, ինչպես, օրինակ, ճարտարապետություն, նաև՝ օրենք, երկրաչափություն: Կան ուսումնասիրողներ էլ, որոնք կարծում են, թե Enki (Ea) կոչվող «կես-ձուկ, կես-մարդ» աստվածը տիեզերական կարգ ու կանոնի հաստատողն էր և աստվածային օրենքների պահապանը: Էնկին էր, որ մարդկությանը փրկեց գալիք աշխարհակործան հեղեղից՝ Նոյին (Atrahasis) սովորեցնելով ինչպես փրկվել և փրկել իր ընտանիքը[34]: Մ. Բութիը նշում է, որ մի շարք մշակույթներում նույնպես առկա են պատմություններ ձկնակերպ աստվածների մասին, որոնք ժամանակ առ ժամանակ այցելում էին մարդկանց ու նրանց սովորեցնում կարևոր գիտելիքներ և կարողություններ, ինչպես, օրինակ, Վիշնուն՝ հնդկական մշակույթում: Մ. Բութիը նաև գրում է, որ ըստ Պլուտարքոսի, Զևսը՝ հունական դիցաբանություն մեջ, սկզբնական շրջանում պատկերվում էր ձկան պոչով[35]:

Ժամանակ առ ժամանակ երկիր այցելող աստվածային ձուկ-մարդիկ վայրէջք էին կատարում Արաբական ծովում և այնտեղից անցնում Միջագետք[36]: Զ. Սիտչինը նաև հավաստում է, որ Էնկին Երկիր է ժամանել, երբ արևը գարնանային գիշերահավասարին ծագում էր Ձկներ համաստեղությունում և մնացել է մեկ Մեծ տարվա տևողությամբ՝ 25,920 տարի, այսինքն՝ մինչև այն ժամանակ, երբ արևը գարնանային գիշերահավասա-

---

[33] Հայա-էնկին համարվում էր «ստեղծող, արարիչ», որը նաև ստորերկրյա օվկիանոսի տիրակալն էր (**Մովսիսյան Ա.**, Սրբազան լեռնաշխարհը, Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Ե., 2006, էջ 9):

[34] **Davis C.K**. Don't Know Much About Mythology, USA, 2005, p. 146 & 158.

[35] Մի կարևոր հանգամանք, որ Մ. Բութիը չի նշում, այն է, որ ասորական պատկերում ձուկ-աստվածը աջ ձեռքում բռնել է սրբազան կոնը, որը կոնաձև գեղձի՝ երրորդ աչքի խորհրդանիշն է, և որի միջոցով միայն մարդ արարածը ի զորու է կապվելու աստծո էությանը: Ուրեմն Օաննեսը նաև մարդկանց հոգևոր էությունը ազնվացնող կարողություն և առաքելություն ուներ: Այս հանգամանքը ավելի համոզիչ է դարձնում այն իրողությունը, որ ձկնակերպ աստծո խորհրդանիշը պետք է, որ կարևոր լիներ նրա հետնորդ թագավոր-աստվածների համար (**Booth M.** The Secret History of the World, The Overlook Press, New York, 2010, p. 99-101. **Sitchin Z.,** նշվ. աշխ., pg. 287):

[36] Զ. Սիտչինը, աքքադական թարգմանությամբ, շումերական գրություններից մեջբերումներ անելով, հայտնում է, որ «թագավորության իրավունքը իջեցվեց երկնքից, ազնվագույն թագից հետո թագավորական գահը նույնպես իջեցվեց երկիր» (նշվ. աշխ., էջ 289-290):

ին ծագում էր Ջրհոս համաստեղությունում[37]: Աստվածաշնչում հայտնի են վաղ ժամանակներում տեղի ունեցած նման եղելությունների արձագանքները, որտեղ ասվում է, թե երբ մարդիկ բազմանում ու տարածվում էին երկրի վրա, աստծո զավակները իջնում էին երկիր և սերունդ էին ունենում մարդկանց աղջիկներից[38]:

Ձուկ-աստծու պաշտամունքը անծանոթ չէր հայ հեթանոսական մշակույթին: Գեղամա լեռներում, Արագածի լանջերին և Հայաստանի այլ վայրերում գտնված ձկան պատկերով հսկա քարե արձանները, ամենայն հավանականությամբ, նվիրված են եղել ձուկ-աստծուն: Ժողովրդի կողմից «վիշապ» անվանվող այս արձանները, հավանաբար, ստեղծվել են մ.թ.ա. երրորդ հազարամյակից սկսած: Հին հեթանոսական դիցաբանության համալիրում այս աստծու պաշտամունքը աղերսվում էր ստորերկրյա ջրերի պաշտամունքին, որովհետև «վիշապները» մեծ մասամբ դրվել են ջրի ակունքների, աղբյուրների կամ ջրանցքների մոտ[39]: Ուշագրավ է, որ հայկական մշակույթում պտտահողմը «**Վիշապ** կամ **Ձկնամբ** անուններն է կրել»[40]:

Հարկ է նշել մի հանգամանք ևս՝ հայ հեթանոսական գլխավոր՝ արևի աստված Միհրի խորհրդաբանական մետաղը եղել է ոսկին, իսկ կենդա-

---

[37] Զ. Սիտչինը գտնում է, որ հին աշխարհի աստղագետները, համաստեղություններին նայելիս, դրանք անվանելիս կամ աստղատները որոշակի աստվածների վերագրելիս որևէ նմանություն չեն տեսել համաստեղությունների անվանական ձևերի հետ: Օրինակ, Ձկների համաստեղությունը ձկների նմանություն չունի կամ Առյուծը՝ առյուծի. այդ աստվածներն իրենց համաստեղություններին կապված են եղել ժամանակի, կամ՝ իրենց հանձնարարված աստվածային գործունեության առումով:

[38] **Աստվածաշունչ,** Մատեան Հին ու Նոր Կտակարանների, եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանված, 1896 թուին Կոստանդնուպոլսում լոյս տեսած Աստուածաշնչի վերատպութիւն, էջ 6, N I-5:

[39] Մ. Աբեղյանը կարծում է, որ ձկնակերպ արձանները՝ «վիշապները», նվիրված են եղել Անահիտ կամ Աստղիկ աստվածուհիներին [**Աբեղյան Մ**., «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձանները (Երկեր, հ. է, Ե., 1975, էջ 103-182]:

[40] Ջրերի հետ առնչվող պտտահողմը Ս. Գրքում նաև *Թաթառ* է անվանվել: «Վիշապ-Ձկնամբը» ձկնակերպ պատկերացնելը բացատրվել է ջրերի վրա իջնելիս կամ բարձրանալիս ձկնակերպ գալարվելու պատճառով (տե՛ս **Բդոյան Վ.**, Հայ ազգագրություն, Համառոտ ուրվագիծ, Ե., 1974, էջ 203): Սակայն հասկանալի է, որ նման երևույթները նույն անվանումը ստանալու համար պետք է որ անպայման կապված լինեին հզոր դիցերի կարողությունների հետ և ոչ թե պարզապես նմանվեին որոշակի կենդանիների:

նակերպը համարվել է Ձկների համաստեղությունը[41]: Հետագայում ձկան խորհրդաբանությունն անցավ միաստվածության ոլորտ և վերագրվեց նաև Քրիստոսին[42]: Առաջին քրիստոնյաները ձկան պատկերը գործածում էին որպես քրիստոնեության նշան-խորհրդանիշ, իսկ հունարեն «իխտիս» բառը, որ նշանակում էր «ձուկ» և, որպես աքրոստիկոս, կազմում էր «Հիսուս Քրիստոս Աստծո Որդի Փրկիչ» արտահայտությունը[43]: Ձկան՝ Քրիստոսի խորհրդանշան դառնալը տարածվեց նաև նոր կտակարանային կարևոր անձերի վրա՝ առաքյալներից ոմանք ձկնորսներ էին, և հետագայում նրանց տրվեց մարդկային հոգիներ որսալու առաքելությունը[44], և, ըստ առաքյալների, խորհրդավոր ընթրիքի ժամանակ սեղանի վրա հացի և գինու հետ կար նաև ձուկ[45]: Ձկան խորհրդաբանությունը, քրիստոնեական խորհրդաբանական համալիրում նպատակին հարմարեցնելն այս պարագայում ակնհայտ է, որովհետև ոչ բոլոր առաքյալներն էին ձկնորսներ: Ինչու՞ հատկապես միայն որոշ առաքյալների մասնագիտությունները դարձան կարևոր միջոց մեկնաբանելու և ապա դառնալու քրիստոնեական պաշտամունքային կառույցի համար այդքան կարևոր խորհրդանիշներ:

Վերադառնանք ձուկ-աստվածներին: Մ. Բութիը ներկայացնում է Բրիտանական թանգարանում պահվող՝ Նինվեի պատերից արտանկարած ձուկ-աստծու պատկեր-փորագրությունը (նկ. 1)[46]: Անհնար է անտեսել

---

[41] **Շահնազարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 145:

[42] Հունարեն «ձուկ» (ichthus) բառի հինգ հիմնական տառերը քրիստոնյաների կողմից որդեգրվել են որպես գաղափարագիր, որը նշանակում էր՝ Iesu Christos (**Chevalier and Gheerbant,** նշվ. աշխ., էջ 385).

[43] Խորհրդավոր ընթրիքի ժամանակ սեղանին սովորաբար, հացի և գինու հետ, պատկերվել է նաև ձուկ՝ որպես Քրիստոսի խորհրդանշան: Գլաձորի Ավետարանի՝ Խորհրդավոր ընթրիքի պատկերում Հիսուսը նստած է ձկնակերպ գահավորակի վրա, և նրա ոտքերը հանգչում են ձկան գլխին (**Դևրիկյան Վ.**, Խորհրդավոր ընթրիք, Հայկական ավանդույթից մինչև Լեոնարդո, Ե., 2008, էջ 109):

[44] Նույն տեղում, էջ 10:

[45] Միջնադարյան մանրանկարչության մեջ այս ձկնակերպ վիշապը երբեմն առկա է «Մկրտության» ու «Դժոխքի» տեսարաններում (**Հակոբյան Հ.**, Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք Բ, Ե., 1982, էջ 33): Նման վիշապապատկեր կա նաև Աղթամարի որմնանկարում՝ «Հովհաննու պատմության» տեսարանում: Մասնագետները հավաստում են, որ այս վիշապը հեթանոսական դիցաբանությունից է անցել քրիստոնեական պատկերագրություն (նույն տեղում, ծանոթագրություններ, էջ 130) և հանդես է գալիս չարի խորհրդաբանությամբ:

[46] **Booth M.**, նշվ. աշխ., էջ 100:

այս պատկերում «ձկան գլուխ» գլխանոցի և Առաքել Պատրիկի «Հայկական տարազ» գրքում բերված Ծոփքի հայկական թագավորներից՝ Քսերքսեսի դրամի վրա ներկայացված արքայական՝ ճեղքված գագաթով թագ-գլխանոցի նմանությունը (նկ. 5): Քսերքսեսի գլխարկն անսովոր ձև ունի, որ հիշեցնում է ձկան կիսաբաց բերան[47], և այս գլխանոց-թագի խորհրդաբանությունը, հավանաբար, հնարավոր չէ այլ կերպ մեկնաբանել, քան որպես ասորական ձուկ-աստծու գլխանոցի արձագանք, որը նրա էության, կոչման և առաքելության անժխտելի ցուցիչն էր: Համեմատելով Տիգրան Մեծի կամ Արտավազդի թագերի կառուցվածքին[48], ակնհայտ է դառնում, որ Քսերքսեսի թագը կապող օղակ է ձուկ-աստծու և հայ թագավորների թագերի միջև:

Հետաքրքրական է, որ երբ Վ. Հացունին քննարկում է Քսերքսեսի երկփեղկված թագավորական գլխանոցը, որ «ճեղքուած, առաջակողմեն լայն ու բարձր, յետկողմէն նեղ ու ցած» ձև ուներ, այն անվանում է եզակի՝ իր ձևով և նշում, որ նման թագ հայտնի չէ այլ մշակույթներում՝ ավելացնելով, որ օտարազգի պատմիչ Բաբլոն այն «հայկական» է անվանել: Վ. Հացունին այս թագը նմանեցնում է եպիսկոպոսական խույրին և վերջում էլ հարց է տալիս՝ «Արդյոք բուն արքայական թա՞գն էր այս, թե՞ քրմական ձև մը...»՝ միևնույն ժամանակ հաստատելով, որ հայոց հեթանոս թագավորները քրմեր էին նաև: Սակայն, քանի որ «հայ թագաւորք միանգամայն քրմապետ էին» և «Միհրի պաշտօնն ու տաճարն Հայոց ընտանի և անոնց մէջ ալ կար մինչև Լուսավորիչ»[49], Վ. Հացունին կարծում է, թե Տիգրանի թագը պետք է որ կրոնական խորհրդանիշ ունենար: Հետևաբար, անհավանական չէ այն ենթադրությունը, թե՝ ինչպես Տիգրան Մեծի և իր հետնորդների ճառագայթաձև, «հայկական» կոչված թագերն, այնպես էլ կաթողիկոսական խույրը պետք է նույն ծագումը ունենային: Տեղին է նշել, որ դեռ V դարում Արշակունի քուրմ-թագավորները կրում էին խույրեր և թագեր, նաև՝ նրանց հանդերձանքի բոլոր պարագաները բանված էին «գեղեցկատեսիլ զարդերով» ու «ոսկեհուռ պաճուճանքներով»[50]:

---

[47] **Պատրիկ Ա.**, նշվ. աշխ., էջ 29, պատկեր 3:

[48] Նույն տեղում, պատկեր 4 և 5:

[49] **Հացունի Վ.,** նշվ. աշխ., էջ 50-51:

[50] Հարկավոր է նկատել, որ պատմիչը՝ Ղ. Փարպեցին, տարբերում է խույրը թագից, չնայած երկուսն էլ համարյա նույն իմաստն ունեն՝ «...զպատուական քարինս. զոր ընկալեալ արուեստող ձեռաց զարդարեն զթագաւորս մեծատեսիլ զարդեօքն յօրինուա-

Նմանատիպ թագ-գլխանոց է հանդիպում Քսերքսեսից մոտ մեկ հազարամյակ անց: XIII դ. առաջին կեսին գրված Հաղպատի Ավետարանի խորանապատկերի լուսանցքում նկարված կերպարը՝ Շերանիկը (նկ. 6), կրում է կաթողիկոսական խույրին հար և նման շքեղ գլխանոց, որի հետևի հարթ շերտի գագաթին ամրացված է փոքրիկ խաչ[51]: Շերանիկը ձեռքին բռնել է ձկնորսական կեռաձայր փայտ, որի ծայրից կախված է մի մեծ ձուկ: Նա գունագեղ հագուստներ է կրում, գոտկատեղի ձախ կողմից կախված է ծոպերիզով զարդարուն, ծաղկանկար մի կտոր, որ բռնել է ձախ ձեռքով, որպես պատվանշան, իսկ կոշիկների հետնամասից փնջազարդեր կան կախված: «Ձկնորսի» կողքին առկա գրությունն ասում է՝ «Շերանիկ, քանի գաս, ձուկն բեր»[52]: Ա. Պատրիկը Շերանիկին ձկնորս է անվանում, իսկ նրա գունագեղ հագուկապը, շքեղ գլխանոցի հետ, համարում է վրացական մշակութային ազդեցություն՝ պատճառաբանելով, որ Շերանիկի գլխանոցը նման է Հառիճի եկեղեցու արևելյան պատին պատկերված Զաքարե սպասալարի գլխանոցին[53]:

Հառիճի եկեղեցու պատի պատկերը կտիտորական քանդակ է, որ ներկայացնում է Զաքարե և Իվանե եղբայրներին՝ ակնածանքով եկեղեցուն սրբապատկեր նվիրելիս: Ա. Պատրիկը հայտնում է, որ եղբայրների կրած հագուստը՝ «XIII դարի հայ և վրաց իշխանական տարազի թագակիր մի նմուշ է»[54]: Չի կարելի կասկածել, որ նման կարևոր իրադարձության առիթով եղբայրները հրաշափառ եկեղեցու պատին հավերժացվել են իրենց պատշաճ և պաշտոնական հագուկապով: Այս պատկերում (նկ. 7) Զաքարե Սպասալարի թագակապով գլխանոց-թագն[55] իր կառուցվածքով չափազանց նման է Քսերքսեսի թագին, միայն թե վերջինս քիչ ավելի բարձր է: Զաքարեի և Շերանիկի թագերը, որ նույն ժամանակաշրջանին և

ծովքն, զոր ի խոյրսն և ի թագսն և ի հանդերձսն յոսկէհուռս պաճուճեալս ընդելուզանեն» (**Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն, էջ 22-23):

[51] **Դուռնովո Լ.**, **Դրամբյան Ռ.**, Հայկական մանրանկարչություն, Ե., 1967, նկ. 18: Այս նկարում պատկերված խորանը Հաղպատի Ավետարանից է, ծաղկող՝ Մարգարե (Մատենադարան, Ավետարան, 1211, ձեռ., 6288):

[52] **Պատրիկ Ա.**, նշվ. աշխ., էջ 123:

[53] Նույն տեղում, էջ 122:

[54] Նույն տեղում, էջ 67:

[55] Զաքարյան եղբայրները ոչ պաշտոնապես, սակայն արքայական կարգավիճակ ունեին, և, հավանաբար, պատկերված գլխանոցը ոչ թե իշխանական գլխարկ է այլ՝ թագի տեսակ:

մշակութային ոլորտին են պատկանում, քիչ են տարբերվում իրարից: Շերանիկի թագը փոքր-քիչ ավելի բարձր է և խաչազարդ, որ, հավանաբար, կրոնական ենթատեքստ ու խորհրդաբանություն ունի: Զաքարեի և Շերանիկի թագերն էլ, հետևաբար, իրենց հերթին, միայն փոքր տարբերություններով, որոշակիորեն կապող օղակ են Քսերքսեսի թագի և եպիսկոպոս-կաթողիկոսի խույրի միջև (նկ. 8): Զաքարեի թագ-գլխանոցի գոյությունը գալիս է հաստատելու ևս մի իրողություն, որ խույրանման թագերը օտար չէին հայկական արքայական կամ կրոնական տարազների միջավայրում: Դա նաև նշանակում է, որ Հռոմի պապի պատվավոր հանդերձների նվիրաբերումներից դեռ շատ առաջ հայ քրմերն ու արքաները խույր-միթր թագեր են կրել[56]:

Իմաստային և խորհրդաբանական առումով կապը ամբողջական կդառնա, եթե անդրադառնանք նմանատիպ թագեր կրող էակ-անձանց բնույթին ու նրանց գործունեության կարևորությանը, որոնք իրենց էության տեսանելի արտահայտությունը պետք է, որ դրսևորեին իրենց հագուստների և գլխի հարդարանքի, մանավանդ գլխազարդ-թագի միջոցով: Ըստ Մ. Բութիի՝ ձուկ-աստվածը, ինչպես նշվեց վերևում՝ կարևոր առաքելություն է իրականացրել մարդկության համար: Նա, իր աստվածային իմացությունը փոխանցելով մարդկությանը, ոչ միայն ազնվացրել է նրան, այլև իր այցը երկիր մի յուրօրինակ գործունեություն է եղել՝ իր բերած գիտելիքով մարդկությանը փրկելով կործանումից: Հիսուսն էլ՝ նման խորհրդաբանությամբ, ջրում մկրտվելով, Աստծու խոսքը իջեցրեց երկիր և իր արյամբ փրկության հնարավորություն ընծայեց մարդկությանը:

Թագավորը մարդկանց աշխարհիկ, իսկ կաթողիկոս-եպիսկոպոսը՝ հոգևոր կյանքի պահպաններն են: Նրանք աստվածային գիտելիքը կրող առաջնորդներ են և իրենց հոգևոր ու մտավոր զարգացումով ու կարողություններով պետք է ապահովեն իրենց խնամքին հանձնված մարդկանց հոգևոր և աշխարհիկ պահպանությունը: Հետևաբար, թագ-գլխանոցը, որը շնորհվում է ընտրյալ-կրողին, նրա՝ աստվածային խորհրդին հասու լինելու

[56] Ձուկը, լինելով կյանքի, բեղմնավորության, ծննդի և վերածննդի խորհրդանիշ և սրբազան գիտելիքը բացահայտող էություն, Վիշնուի ավաթարներից մեկն էր, որ Մանուին փրկեց ջրհեղեղից և նրան տվեց Վեդաները՝ հինդուիստական սրբազան օրենքները: Սուրբ ձուկը հայտնի է և կարևորագույն տեղ է զբաղեցնում եգիպտական, փյունիկյան, միջագետքյան և այլ մշակույթներում (**Chevalier and Gheerbrant**, նշվ. աշխ., էջ 383):

մտավոր և հոգևոր կարողության ցուցիչն է: Այն հանգամանքը, որ թագը-գլխանոցը դրվում է կրողի գլխից վեր, խորհրդանշում է վերջինիս ամենակարևորագույն դերն ու նպատակը իր առաքելությունն իրականացնելու ճանապարհին: Ավանդապահությունն այս կարևոր գլխանոցի պարագայում զարմանալի չէ, քանի որ դրա իմաստն ու կարևորությունը հույժ էական են եղել Առաջավոր Ասիայի, Միջագետքի մշակույթներում, և թագ-խույր կրող հեթանոս աստծու կամ ամենաբարձրյալի կամքը կատարող ընտրյալ պաշտոնյայի կյանքի հիմնական նպատակն էր ճանաչել Աստծուն և իր նման երկրավոր էակներին օգնել հետևելու իր օրինակին: Ավելին, պատասխանատու լինել հասարակ մահկանացուների՝ իրեն վստահված հոգիների փրկության համար[57]:

Հին հայկական մշակույթի ժառանգության մեջ հայտնի չեն ճիշտ Օաննեսի նման հեթանոսական ձկնակերպ աստվածների պատկերներ, սակայն չի կարելի ենթադրել, որ նրանց ուղղակի նմանակների բացակայությունը ենթադրում է նաև նրանց բացակայություն: Հետևաբար, ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ հայ կաթողիկոսներն ու եպիսկոպոսները, որ տարբեր գլխանոցներ են կրել պատմության ընթացքում, հռոմեական խիստ ազդեցության ժամանակաշրջանից հետո էլ հավատարիմ են մնացել այս ավանդությանը: Խույրի նախատիպը կաթոլիկ եկեղեցուն է անցել Միջագետքից, Առաջավոր Ասիայից և ժամանակի ընթացքում, որոշ փոփոխությունների ենթարկվելով, նվիրատվությունների միջոցով վերադարձել է իր սկզբնաղբյուրին, և Հայ առաքելական եկեղեցու առաջնորդները մինչև հիմա էլ պատվով կրում են այդ թագ-խույրը:

Ակնհայտ է, որ ձկան խորհրդանշանի իմաստն ու էությունը հայտնի են եղել քրիստոնեության ընդունումից դեռ շատ առաջ և ներկայացրել են գլխավոր աստծուն՝ իր «ձուկ» խորհրդաբանությամբ, դրա համար էլ այն հեշտությամբ վերագրվել է Հիսուսին և դարձել նրա կարևոր ատրիբուտներից մեկը: Որպես այդպիսին՝ միայն պատշաճ էր, որ այն օգտագործվեր զարդարելու հոգևոր արքայի գլուխը, այն էլ՝ միայն սուրբ պատարագի կամ հատուկ եկեղեցական արարողությունների ժամանակ:

---

[57] Կաթոլիկ եկեղեցու հայրապետի՝ Հռոմի պապի թագադրության ժամանակ թագադրող կարդինալը նրան ասում է, որ նա ընդունում է եռակի թագը, որ նշանակում է՝ կրելով այդ թագ-թիարան՝ «նորընծա պապը» դառնում է ոչ միայն «հայր», այլև «արքա, իշխան և տիրակալ Երկրի վրա», հետևաբար, նաև ընդունում է «Սուրբ Երրորդությանը» (նույն տեղում, նշվ. աշխ., էջ 1007):

Նկ. 1.

Նկ. 2.

Նկ. 3.

Նկ. 4.

Նկ. 5.

Նկ. 6.

Նկ. 7.

Նկ. 8.

Նկ. 1. Ձուկ-աստված Օաննես, մ.թ.ա. XIX դ., ռելիեֆային պատկեր Նինվեից, Բրիտանական թանգարան (M. Booth, The Secret History of the World, 2011, p. 100)

Նկ. 2. Թեշուբը ցլի վրա, Առաքել Պատրիկ (Հայկական տարազ, տախտ. 2, նկ. 1, էջ 21)

Նկ. 3. Թեշուբի արձանիկ, Կարմիր բլուր, ՀՊՊԹ (Առաքել Պատրիկ, նշվ. աշխ., տախտ. 3, նկ. 2, էջ 23)

Նկ. 4. Տիգրան Մեծի դրամը (Առաքել Պատրիկ, նշվ. աշխ., տախտ. 6, նկ. 4, էջ 29)

Նկ. 5. Քսերքսեսի դրամը (Առաքել Պատրիկ, նշվ. աշխ., տախտ. 6, նկ. 3, էջ 29)

Նկ. 6. Շերանիկ (H. Hakopian, E. Korkhmazian, Armenian Miniatures of the 13th and 14th Centuries, Haghbat Gospel, Matenadaran Collection, 1984, Khoran, f. 8v. ill. 12)

Նկ. 7. Զաքարե սպասալար, Հառիճ, XIII դ. (Առաքել Պատրիկ, նշվ. աշխ., տախտ. 26, էջ 67)

Նկ. 8. Կաթողիկոսական խոյր, XVIII դ. (Մ. Ղազարյան, Սբ. Էջմիածին, Գանձատուն, Ս. Էջմիածին, 1984)

Ուրեմն՝ թագավոր-քուրմ Տիգրան Մեծի թագը, իր երեք հիմնական մասերով՝ ոսկե ատամնավոր կամ ճառագայթաձև թագ, ուսերին իջնող ապարոշ-արտախուրակ, թագի և արտախուրակի միացման հատվածում կապվող թագակապ, որոշակի ձևափոխումների ենթարկվելով՝ պահպանվել է կաթողիկոսի հանդերձանքի համալիրում՝ որպես հանդերձի ամենակարևոր, տարբերակիչ մաս: Խույրը՝ ձկան խորհրդաբանությամբ, փոխարինել է ճառագայթաձև ոսկե թագին: Ապարոշը թագից անջատվել և վերափոխվել է վակասի, իսկ թագակապին փոխարինել են արտախուրակները: Սա է հիմնական պատճառը, որ այս երեք մասերն էլ հայոց լեզվում ունեցել են թագի և խույրի իմաստ ու նշանակություն:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԹԱԳ-ԽՈՒՅՐԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԽԱՉՄԱՆՅԱՆ Ս.Հ. (ԱՄՆ, Լոս Անջելես)

Ամփոփում

Խույրը Հայոց առաքելական եկեղեցում կրում են միայն բարձրաստիճան հոգևորականները՝ եպիսկոպոսները և կաթողիկոսները՝ որպես հոգևոր արքաներ: Այն գործածվում է եկեղեցական հանդիսավոր արարողությունների ժամանակ միայն: Այս շքեղ, խաչազարդ թագ-գլխանոցը՝ իր «mitra» անվամբ, Հայոց եկեղեցու կողմից վերջնականապես որդեգրվել է XV դարում: Դա կաթոլիկ եկեղեցու ազդեցության հետևանք է, սակայն նրա գործառութային և խորհրդաբանական նշանակությունը գալիս է նախաքրիստոնեական շրջանից: Այն աստիճանական զարգացման ընթացքում, փոփոխությունների ենթարկվելով, ստացել է իր վերջնական տեսքը:

Խույրի խորհրդաբանությունը վերագրվում է Հայա-Enki (Ea) անվամբ «կես-ձուկ, կես-մարդ» կոչվող հեթանոսական դիցին, որը միջագետքյան աղբյուրներում պատկերվում էր հենց ձկան տեսքով: Նա տիեզերական կարգ ու կանոնի հաստատողն էր և աստվածային օրենքների պահապանը: Հետագայում ձկան խորհրդաբանությունը վերագրվեց Հիսուսին և, որպես եկեղեցու արքայի սրբազան թագ-գլխանոց, իր խորհրդաբանական արտահայտությունը գտավ կաթողիկոսի հանդերձանքի համալիրում:

Բանալի բառեր՝ սրբազան հանդերձ, թագ-գլխանոց, ծես, ավանդույթ, խորհրդաբանություն, տարբերակիչ տարր, նշան-խորհրդանիշ:

СИМВОЛИКА МИТРЫ-КОРОНЫ КАТОЛИКОСА

ХАЧМАНЯН С.Г. (США, Лос-Анджелес)

Резюме

Митру в Армянской апостольской церкви носят только высокопоставленные представители духовенства – епископы и католикосы как духовные цари, и она используется лишь во время торжественных церковных обрядов (церемоний).

Эта великолепная, украшенная крестами корона – головной убор под названием «mitra» окончательно была принята армянской церковью в XV веке, что считалось результатом влияния католической церкви, но её функциональное и символическое значение восходит к дохристианскому периоду, и в процессе постепенного развития, подвергаясь изменениям, она получила свой окончательный вид.

Символика митры приписывается языческому божеству «полурыба, получеловек» под названием а – Enki (Ea), которое, согласно письменным источникам Междуречья, изображалось именно в виде рыбы. Божество это утверждало вселенские законы и порядки, охраняло божественный порядок. Впоследствии символика рыбы была приписана Иисусу, что и получило своё символическое отражение в комплексе убранства католикоса как священная корона – головной убор царя церкви.

Ключевые слова – священное убранство, корона-шапка, обряд, традиция, символика, отличительный элемент, знак-символ.

THE SYMBOLOGY OF THE MITER-CROWN OF THE CATHOLICOS

S. KHACHMANYAN (USA, Los Angeles)

Abstract

The Miter is worn by the religious heads: bishop and Catholicose, as religious kings in the Armenian Apostolic Church. This crown is used during holy liturgy or during religious ceremonial occasions only. Miter is a luxurious, golden crown-headdress, decorated with crosses, which was finally adopted by the Armenian Church in the 15th century. This crown was considered being an influence of the Western Catholic Church, however, its functional and symbolic meaning is age old and coming from the pre-Christian era. During its gradual historic development, the miter went through a variety of changes acquiring its final modern look.

The symbology of the the miter was attributed to the "half-fish half-man pagan god by the name of Haya-Enki (Ea). According to anient Mesopotamian sources, this god was portrayed as a fish. Haya-Enki was considered the founder of the universal order and the guardian of the divine law. Later in the history, the fish symbol was attributed to Jesus, therefore, It was only appropriate that this symbol found its expression in the regalia of the Catholicos' vestments as the crown-headdress worn by the king of the church.

Key words – holy vestments, crown-head dress, ritual, tradition, symbol, distinguishing element, sign-symbol.